

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Վէպս որ աստէն յինէն երգի
Չէ ծնունդ շրթանց մարդահաճի,
Այլ ճառ ըստոյգ եւ արժանի
Առ ի դովեստ Սարգսի քաջի,

Որ մըտօքն էր հանճարալի,
Կամօք պատրաստ առնել զժարի,
Ուշիւ յաջող սրտիւ արի,
Բանիւ վըստահ եւ փաստալի,

Ողջամիտն էր յամենայնի,
Խոկմամբն անկեղծ խորհրդալի,
Յուզիչ է՝ ունակն էր սըխրալի
Քաջ ըսկզբանց եւ առածի,

Խորագէտն էր եւս աղանի,
Քաղաքական առանց կեղծի,
Հընարագիւտ ի շուարի,
Եւ փարատիչ տարակուսի,

Սըրտմտօղն էր ըստ պատշաճի,
Սաստիչ լեզուի բարբանջողի
Վըստահ գանիչ զըրկահարի
Եւ յանիրաւս ընթացողի

Չէր մարդելոյլ փառաց գերի,
Այլ զողջ աւուրս իւրում կենի,
Փառքըն ինքեան չողայր ըզկօի,
Ուստի լինէր նախանձելի,